Ե· ՏԱՐԻ 1445 ԹԻՒ ՀԱՅՈՑ 4380 ՍԱՀՄԻ 18 ՀԻՆԳՇԱԲԹԻ 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1888 (Ն· Տ·) 8 ՆՈՅԵՄԲԵՐ 1888 3 ՐԵՊԻՒԼ ԷՎՎԷԼ 1306

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿՆ ԿԱՄ ՈՐ ԻՆՉ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան
در علیه‌ده غلطه‌ده نورادونكیان خاننده (آرەولك)
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ· Պոլսոյ համար Տարեկան կանխիկ արծաթ 160
» » Վեց ամսոյ » » 80
» » Երեք ամսոյ » » 40
Գաւառաց » եւ տեղական
թղթատարով տարեկան » 240
Գաւառաց համար եւ տեղական
թղթատարով վեցամսեայ » 120
Օտար երկիրներէ տարեկան Ֆրանք 56
» » վեցամսեայ » 28
Դուրս ղրկուած յօդուածոց համար ծախքը Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեանս ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չդարձուիր·

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ· ՊՈԼԻՍ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1888

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ Ս· ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՂԱԼԱԹԻՈՅ

ԱՌԱՋԻԿԱՅ ԿԻՒՐԱԿԻ ՕԾՄԱՆ ՀԱՆԴԷՍ

Իր հնութեամբ պատկառելի և իր արկածներով խղճալի այն մթին շէնքն որ երբեմն անախորժ համբաւ մը կը վայելէր իբրև վառարան կուսակցական գործունէութեան մը և իբրեւ կեդրոն յոռի մատակարարութեան մը, այսօր Ազգին կ'ընծայէ պայծառ հաւաքածոյ մը առաջնակարգ հաստատութեանց, որոց մէջ կը փայլին վառ կենդանութիւն մը և մեղուաջան հանրօգուտ գործունէութիւն մը· Ընթերցողք հասկցան թէ կ'ակնարկենք Ղալաթիոյ եկեղեցին, որ շրջափակին մէջ այսօր կը բովանդակին բազում տարիներու մէկ գեղեցիկ երազին իրագործումը, Ազգային կեդրոնական Վարժարան մը՝ բարեկարգ ուղղութեամբ, իւր արդէն կազմեալ երեք դասարաններով և իւր Նախապատրաստական դասարանով, Ազգային Խորհրդարան մը, յարակից վարչական դիւաններով, Կեդրոնական Նախակրթարան մը՝ մանաւորապէս գաւառացի հարիւրաւոր պանդուխտ մանկտւոյն յատկացեալ, Ազգային Մատենադարանի սկզբնաւորութիւն մը, կիրակնօրեայ վարժարան մը, Միացեալ Ընկերութեանց կեդրոնական վարչութիւնն, և ի վեր քան զամենայն՝ վերանորոգեալ եկեղեցի մը, որ տեսակին մէջ այսօր գոհարիկ մը կը հանդիսանայ·

Այս եկեղեցի 1436ին կառուցուած լինելով, Կ· Պոլսոյ հայոց հնագոյն եկեղեցին է· Արձանագրութենէ մը կը տեղեկանանք թէ գետինը ժամանակին Ճենովացիներէն գներ է Ղրիմու Քէֆէ քաղաքացի Կոմս անուն Հայազգին, և եկեղեցին շինուեր է յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ի հայրապետութեան Տեառն Թէոդորոսի Սրբազան Կաթողիկոսի և ի Պատրիարքութեան Երուսաղեմայ Տեառն Եսայեայ Արքեպիսկոպոսի Առաջնոյ, երբ Հայք Կ· Պոլսոյ Պատրիարք չունէին դեռ, քանի որ Կ· Պոլսոյ առումը տեղի ունեցած է յամին 1453· Անցեալ դարուն առաջին քառորդին մէջ այս եկեղեցի այրելով, վերաշինուած է 1733ին, ի Պատրիարքութեան Կ· Պոլսոյ Տեառն Յովհաննու Բաղիշեցւոյ, Կոլոտ կոչուած, որոյ գերեզմանը կը գտնուի եկեղեցւոյն կեդրոնական տաճարին առջեւ, և աշխատասիրութեամբ Սարգիս Գալֆայի·

Այս եկեղեցի ճշմարիտ հնութիւն մ'է, այնու զի բիւզանդեան ճարտարապետութեան գեղեցկագոյն արտադրութիւններէն մին է· Իտալացի երեւելի ճարտարապետ Պ· Ժօրժ Սթամփա, որ Իտալիոյ և Անգլիոյ մէջ ուսած է իւր արուեստ, կը վկայէ թէ Ղալաթիոյ եկեղեցին Կ· Պոլսոյ մէջ երրորդ շէնքն է ի շարս բիւզանդեան արուեստի հրաշակերտաց· Աւելորդ է ըսել թէ առաջինն է Այա Սոֆիայի մզկիթն· Այսպիսի հնութիւն մը լաւագոյն վիճակի մէջ պահել Ազգին համար պատուոյ մեծ խնդիր մ'է· Բաց աստի, եկեղեցւոյ բակին մէջ Ազգ· Խորհրդարանի և Նախակրթարանի լայնանիստ հոյակապ շէնքին բարձրացմամբ, բակը նեղցած էր, և կեդրոնական տաճարին գաւիթն եկեղեցւոյ մարմնէն դուրս ցցուած, այս անձուկ միջոցին մէջ եկեղեցւոյն ճակատը բոլորովին կը գոցէր· Հարկ էր այս գաւիթը կարել, երեք տաճարներուն դուռները մէկ գծի վրայ բերել, և այս առթիւ յոյժ փափաքելի էր եկեղեցւոյն ներքին անհարթութիւններն ալ նորոգել և ամբողջութիւնն ի նորոյ պայծառացնել·

Այս գաղափարով տարի մը յառաջ ձեռնարկեցաւ Ղալաթիոյ եկեղեցւոյն նորոգման, անձնուէր տնօրէնութեամբ Պ· Սթամփայի, որ ի սէր արուեստին ձրիապէս ստանձնեց այս գործ, և որուն կ'օգնէր Սկիւտարցի ծանօթ ճարտարապետ Հաճի Գրիգոր Գալֆան· Պ· Սթամփա, Ազգ· Վարչութեան և Ղալաթիոյ Թաղային Յանձնաժողովոյն հետ համախորհուրդ, ձեռնարկեց Ս· Լուսաւորիչ եկեղեցին նորոգել՝ ճշդիւ հետեւողութեամբ այն բիւզանդեան ոճին որով շինուած էր հինն· Եւ մասնագէտներու վկայութեամբ, իտալացի արուեստագէտը լիուլի յաջողած է իւր դժուար ձեռնարկին մէջ·

Ղալաթիոյ եկեղեցւոյն կեդրոնական տաճարը նուիրուած է Ս· Գրիգոր Լուսաւորչի անուան, աջ կողմի տաճարը՝ Ս· Կարապետի, ձախ կողմինը՝ Ս· Խաչի, և ասոնցմէ զատ կայ Ս· Փրկչի նուիրեալ փոքրիկ մատուռ մը· Կեդրոնական տաճարին գաւիթը կտրուելով, երեք տաճարք այսօր մէկ գծի վրայ հոյատեսիլ ճակատ մը կը ներկայացնեն, բոլորովին ի նորոյ յօրինուած, ըստ կարի հետեւողութեամբ Վենետկոյ Ս· Մարկոսի եկեղեցւոյ ճակատին, որ հնաշխարհիկ հրաշակերտ մ'է բիւզանդեան արուեստին և իտալեան ճարտարապետութեան միանգամայն· Այս ճակատ, իւր ճարտարարուեստ գմբէթներով, կամարներով, և սեւ ու դեղին գոյներուն շերտ առ շերտ խառնուրդով, և նոյն իսկ իւր երբեակ զանգակներուն նոր օրինակ զետեղմամբ, Կ· Պոլսոյ հայ եկեղեցեաց մէջ եզական կը հանդիսանայ· Կեդրոնական դուռը կը զարդարէ սեւ ու դեղին խառն երանգներով մարմարեայ շրջանակ մը, որ արդէն կար և կը պահուի իբրև ճշմարիտ հնութիւն մը, քանի որ այս մարմարինն արտադրող հանքն սպառած է Հռովմայեցւոց ժամանակէն ի վեր, և այս հնութեան ալ իբրև պատուանդան և իբրեւ շրջանակ կը ծառայէ ո՛չ նուազ անգին հնութիւն մը, հին կոչուած մարմարինն, որ մէկ զանգուածն այս առթիւ նուիրած է բարեսէր ոմն, զայն կտրելու համար պէտք եղած երեք հազար դրշի չափ ծախսն ալ վճարելով· Այս հազուագիւտ մարմարինէ մաս մ'ալ եկեղեցւոյ ներսը գործածուած է·

Եկեղեցւոյն մէջ մտնելով, ամենէն աւելի աչքերնուս կը զարնէ ներքին միջնորմերուն կամարաձեւ բացմամբ երեք տաճարաց ի մի խառնումը· Առաջուան պատուհաններուն տեղ այժմ կան մէկ մէկ գեղեցիկ լայն կամարներ, իւրաքանչիւր կարգի վրայ վեցական հատ· Այս կերպիւ՝ նախ՝ եկեղեցին ընդարձակուած է· զի կեդրոնական տաճարն իսկ կիւրակի և տօն օրեր շատ նեղ կուգար, մինչ՝ այս կամարներու միջոցաւ՝ եկեղեցին թէ՛ մէկ ամբողջութիւն կը կազմէ հանդիսաւոր պարագայից համար և թէ իւրաքանչիւր տաճար իւր ինքնուրոյն հանգամանքը կը պահէ սովորական պարագայից համար· Բաց աստի, այս կամարներու շնորհիւ ամբողջ շէնքն աւելի լուսաւոր է այսօր· Եւ յետոյ, կամարներն, ինչպէս որմերն ալ, բիւզանդեան ոճով գոյնզգոյն նկարուելով, եկեղեցւոյն նոր շքեղութիւն մը տուած են· Այս երբեակ տեսութեամբ, միջնորմերու կամարաձեւ բացումն սքանչելի գաղափար մ'եղած է· Երեք տաճարաց դուռներէն ներս մտնելով, կը տեսնենք մէկ մէկ փոքր գեղեցիկ գաւիթ, որ տաճարին ներսի մասէն բաժնուած է կնձնի ընտիր փայտէ յօրինուած վանդակապատներով, ինչպէս երեք տաճարն ալ իրարմէ բաժնուած են վանդակապատներով·

Եկեղեցւոյն ներսը զարդարող նկարներն յօրինած է իտալացի ուրիշ երեւելի արուեստագէտ մը, Պ· Անճելօ, որ կայսերական շինուածոց նկարիչն է այժմ, և գեղեցիկ գործեր ունի ի Բերա· Կեդրոնական տաճարին և Ս· Փրկչի մատրան մէջ իւղաներկ, և միւս երկու տաճարներուն մէջ ջրաներկ գործածուած է· Պ· Անճելօ նորոգած է կեդրոնական տաճարին ձեղունն իւր հին նկարներով որք մէկ մէկ հնութիւն են, և ի նորոյ յօրինած է միւս երկու տաճարներուն ձեղունի գեղեցիկ նկարներն· Աւելորդ է ըսել թէ գոյներուն բաղադրումը բոլորովին բիւզանդեան ոճով է, և թէ հոն կը տիրեն արեւապատկերին բոլոր գոյներն իրենց բոլոր երանգներով, յորս ոսկեգոյնը, կապոյտ ու կանաչը գերադաս կը հանդիսանան· Սեղանք և խաչկալք եւս մեծապէս պայծառացած են· Ս· Խաչի և Ս· Կարապետի խաչկալք նորոգուած են· բայց կարելի չէ եղած նորոգել կեդրոնական խաչկալն, որ իւր նրբարուեստ և թանկագին յօրինուածով Ղալաթիոյ եկեղեցւոյն գեղեցկագոյն հնութեանց մին է, և զոր իւր ոճով, իւր սատափ և ոսկեայ կիտուածներով նորոգելու համար, առ նուազն տասն հազար դրուշ ծախք կ'ենթադրուէր· Կեդրոնական տաճարի դասին եւ սեղանին մէջ եւս գեղեցիկ հնութիւն մ'են յախճապակեայ քառադարեան մանր փայլուն աղիւսներն, որք նախնի գծագրութեան համեմատ ի նորոյ յարդարուած և ամբողջացած են·

Կեդրոնական տաճարին յատակը տախտակէ էր և միւս երկու տաճարացն՝ հողէ· Ասոնց տեղ այժմ ակնահաճոյ և աւելի հաստատ յատակ մը կը պարզուի, չիմէնթոյի և մանր կայծքարներու բաղադրութեամբ մը շինուած ֆրանսագործ նորօրինակ աղիւսներով, որք իրենց սպիտակ եւ սեւ գոյներուն շեղանկիւն յարդարմամբ նորզարդ մ'են· Գունաւոր ապակիներն որք արեւելեան և արեւմտեան պատուհանները կը զարդարեն, գեղեցիկ երանգներ տալով արեւու ճառագայթներուն, ո՛չ նուազ ակնահաճոյ կը հանդիսանան·

Ս· Խաչի տաճարին մէջ զետեղուած է մարմարեայ հոյակապ աւազան մը, զոր նուիրած է Տիկին Իսկուհի Կ· Փափազեան, ի յիշատակ իւր ծնողաց՝ Գափամաճեան Յարութիւն աղայի և Մաքրուհի Տիկնոջ· Երեք տաճարաց մէջ կախուած են մէկ մէկ նոր ջահեր, որոց երկուքը նուիրուած են այս նորոգութեան առթիւ, և երրորդն հոգելոյս Տ· Ներսէս Պատրիարքի գոյքերէն գնուած է· Վսեմ· Լեւոն պէյ Գափամաճեան ալ նուիրած է մեծ զանգակ մը, ի յիշատակ իւր հօր՝ Գափամաճեան Մկրտիչ էֆէնտիի·

Այս նորոգութեան համար ծախք եղած է 1,500 ոսկի, որոյ համարատուութիւնն անշուշտ ի մօտոյ պիտի կատարէ Ղալաթիոյ Յանձնաժողովը· Այս գումարէս 300 ոսկին Գափամաճեան Մաքրուհի Տիկնոջ մահուանն առթիւ իբրև գերեզմանագին առնուած նուէրն է· 140 ոսկի գոյացած է Ս· Փրկչի մատրան նուիրեալ ոսկեզօծ և արծաթեայ անգործածելի նիւթեղէններու և հին պղնձէ անօթներու վաճառմամբ· Երկու բարեսէր անձինք ալ 55 ոսկւոյ նիւթեղէն նուիրած են· Մնացեալ 1,000 ոսկին արտադրուած է եկեղեցւոյ հասութից յաւելեալ մասէն· Այս պարագայ մեծ պատիւ կը բերէ Ղալաթիոյ Յանձնաժողովոյն բարւոք մատակարարութեան, որոյ վրայ առանձին յօդուածով պիտի խօսինք ի մօտոյ·

Ղալաթիոյ եկեղեցւոյն նորոգութեան առթիւ, սա բառերով յաւելուած մ'եղած է եկեղեցւոյ ճակատը զարդարող քառադարեան արձանագրութեան վրայ· «Նորակերտ յօրինեցաւ ճակատ Ս· Եկեղեցւոյս և կամարաձեւ բացմամբ ներքին միջնորմոց երեքին տաճարք խառնեցան ի մի, ի Հայրապետութեան Ամենայն Հայոց Տ· Տ· Մակարայ Ս· Կաթողիկոսի և ի Պատրիարքութեան Կ· Պոլսոյ Տ· Յարութիւն Վեհապետեան Ս· Արքեպիսկոպոսի, ընտրելոյն ի Պատրիարքութիւն Երուսաղեմայ· 1888»·

Առաջիկայ կիւրակի պիտի կատարուի Ղալաթիոյ նորոգեալ եկեղեցւոյն օծման հանդէսը· Պիտի պատարագէ Երուսաղեմայ Պատրիարք Ամեն· Տ· Յարութիւն Ս· Արքեպիսկոպոս, և ներկայ պիտի գտնուին Կ· Պոլսոյ Նորընտիր Պատրիարք Ամեն· Տ· Խորէն Ս· Արքեպիսկոպոս և Նախորդ Պատրիարք Ամեն· Տ· Խրիմեան Հայրիկ· Իբրեւ բոլորովին նոր շինուած, պիտի օծուին եկեղեցւոյն երեք դուռներն ու մկրտութեան նոր աւազանն, իսկ պարզապէս պիտի օրհնուին խորաններն ու խաչերն·

Այսպէս նորոգեալ, Ղալաթիոյ Ս· Լուսաւորիչ եկեղեցին Կ· Պոլսոյ գեղեցկագոյն հնութեանց կարգը կ'անցնի, և մայրաքաղաքս այցելող հմուտ օտարազգեաց համար հետաքրքրութեան արժանի առարկայ մը կը դառնայ· Հայաստանի տաճարները տեսած Հայազգի մը հայկական բան մը չի տեսներ այս եկեղեցւոյ ճարտարապետութեան և գոյնզգոյն մօզայիքներուն մէջ· Բայց բնաւ չէ փորձուած եկեղեցւոյն նախկին կաղապարը փոխել հետեւողութեամբ ո՛ և իցէ հայկական օրինակի, և այս դարաւոր շէնք, որ իւր հաստատակազմ ճարտարապետութեամբ դարեր ունի դիմանալ, միայն յիշատակարան մը պիտի լինի այն մեծ ընդունակութեան զոր Կ· Պոլսոյ Հայք ցուցած են իւրացնելու յունական արուեստն, որուն մեր նախնիք եւս ո՛չ նուազ ճարտար հետեւողներ եղած էին իմացական գործունէութեան ուրիշ ճիւղերու մէջ·

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ

Փեթերպուրկ, 3 Նոյմ· — Պաշտօնական Լրաբեր կը ծանուցանէ թէ կայսրն ոտքէն և կայսրուհին ձեռքէն վիրաւորուած են Պորքիի երկաթուղւոյ արկածին մէջ· Բայց այս վէրքեր արգելք չեն եղած նոցին Վեհափառութեանց՝ վիրաւորելոց խնամածութեան հսկելու· Թիկնապահ զօրավար Շերեմեթեւի քանի մը մատերը կոտրեցան եւ կուրծքը ճնշուեցաւ· Արքունեաց պատուակալ օրիորդ Մարի Բուլթուզով ոտքէն վիրաւորեցաւ· Ծանր վէրքեր ստացան պատերազմական նախարարն և հանրային շինութեանց և հաղորդակցութեանց նախարարն եւ երկաթուղեաց ընդհանուր վերատեսուչը, զոր պատգարակով փոխադրել պէտք եղաւ· Մեռեալք 21 անձինք են, վիրաւորք՝ 31, յորոց մին ևս մեռած է յետոյ· Պաշտօնական Լրաբերը կը յարէ թէ կայսրն անձամբ դիտած և ոստիկանութեան սպայի մը յանձնած է երկաթուղւոյ փտած գերանի կտոր մը, նոյն կէտին վրայ ուր տեղի ունեցաւ արկածն, որպէս զի բացուելիք քննութեան մէջ ցոյց տայ·

—Պ· Կոպլէ Նոյմ· 3ին ընդունեց Կ· Պոլսոյ դեսպանն՝ զՊ· Մոնթեպէլլօ, որ նախարարին յանձնեց օրինակ մը Սուէզի ջրանցքի Պայմանագրոյն, ամեն Տէրութեանց դեսպաններէն ստորագրեալ·

—Վիլհէլմ կայսր երէկ կամ այսօր Պերլինէ պիտի մեկնէր, այցելութիւններ տալու Գերմանիոյ փոքր Վեհապետաց ոմանց, — Սաքս Վէյմարի մեծդքսին, Սաքս-Մայնինկէնի դքսին եւ Սաքս-Քոպուրկ-Կոթայի դքսին·

—Կ· Պոլսէ կը հեռագրուի թէ Բ· Դուռն որոշած է առաջիկայ գարնան նաւատորմ մը ղրկել՝ այցելու համար Ցունաստանի, Ադրիական ծովու եւ Ֆրանսայի նաւահանգիստներն, և Միջերկրականի ափրիկեան ծովեզերաց երկայնութեամբ պտոյտ մ'ընելով ի Կ· Պոլիս վերադառնալու համար·

—Մուխթար փաշա նոր տեղեկագրեր ղրկեր է ի Բ· Դուռն, յայտարարելով թէ Սուտանի կողմն ի մօտոյ կարեւոր շարժում մը տեղի պիտի ունենայ·

—Գերմանիոյ մէջ օրէ օր կը սպասուի Հոլլանտիոյ ծերունի և հիւանդոտ Թագաւորին մահուան, որ ժառանգ չունենալուն, իւր վեհապետական անձնական իշխանութեան ներքև գտնուող Լիւքսէմպուրկի Դքսութիւնը գերման Իշխանի մը (Նասաուի Դքսին) պիտի անցնի, և այս կերպիւ գերմանական Կայսրութեան մաս մը պիտի կազմէ կերպիւ իւիք·

—Ռուս երեւելի երկրախոյզ Զօր· Փրժեվալսքի, որ քանիցս յաջողապէս Կեդր· Ասիոյ մէջ քաղաքական-գիտական խուզարկութիւններ կատարելէն յետոյ, նորագոյն և ընդարձակագոյն խորհրդովք ճամբայ ելած էր Թիպէթի անհպելի մայրաքաղաքը մտնելու հաստատ առաջադրութեամբ, ճամբան մեռեր է· Ռուսաց համար մեծ կորուստ մ'է այս·

—Սերպիոյ Նաթալի Թագուհւոյն անուան ի Սերպիա հոգեւոր պաշտամանց մէջ յիշատակութիւնը դադրեր է·

—Գերման լրագիրք ոմանք երկիւղ կը յայտնեն թէ Պորքիի երկաթուղւոյ աղէտալի արկածը կրնայ վճռական տպաւորութիւն մ'ունենալ Ցարին մտաց վրայ, և ասոր հետեւանքը մեծապէս զգալի կրնայ լինել եւրոպեան միջազգային քաղաքականութեան մէջ·

—Գերման լրագիրք պատերազմաշունչ ոգի մը կը տեսնեն Շալոնի ֆրանսական զօրաբանակին նոր հրամատար Միրիպէլ զօրավարին ի Նանսի արտասանած բանախօսութեան մէջ, յորում ըսած էր թէ «Եթէ պարագայք հարկադրեն զմեզ, եթէ օր մը Ֆրանսա պատրաստուի զէնք առնուլ յինքնապաշտպանութիւն, ձեռքէս եկածը պիտի ընեմ որպէս զի ձեր նահանգը սահմանագլխոյ նահանգ մը չմնայ,» այսինքն՝ որպէս զի Ֆրանսա ետ առնու իւր կորուսած սահմանագլխոյ նահանգները·

—Արհիդուքս Քարլ Սալվաթորի որդւոյն Տօն Քարլոսի դստեր՝ Տոննա Պլանքա տէ Պուրպոնի հետ նշանախօսութեան առթիւ, Ֆրանձ Եօզէֆ կայսր յայտարարեր է թէ այս միութիւն բնաւ քաղաքական նշանակութիւն չպիտի ունենայ, այսինքն՝ Տօն Քարլոսի սպանիական գահուն վրայ ունեցած յաւակնութեանց ոյժ չպիտի տրուի, ըստ որում Աւստրիա Սպանիոյ օրինաւոր վեհապետ կը ճանչէ արդէն մանուկ Ալֆոնս ԺԳ թագաւորն, և եթէ Տօն Քարլոս քաղաքական մեքենայութիւններ ի գործ դնէ, Աւստրիոյ մէջ իւր բնակութիւն պիտի արգիլուի·

—)(56)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺՕՐԺ ՕՆԷ

ԿԵՆԱՑ ՊՈՅՔԱՐՆԵՐԸ

ՍԵՐԺ ՊԱՆԻՆ

—Ձեր կարծածէն աւելի լուրջ, շարունակեց Մաւէշալ պաղարիւնութեամբ· Միայն, ԺԹ դարուն մէջ կ'ապրինք, գիտէք, եւ այլ եւս առաջուան չափ դիւրութեամբ կարելի չէ նախախնամութիւնը մէջ բերել՝ դաշոյնի կամ թոյնի ձեւին ներքեւ· Իրաւ է թէ երբեմն երբեմն, ընտանեաց մէջ, զանիկ կը գործածեն, բայց չյաջողիր այն· Գիտնականներն այն տեսակ գործիներ հնարելու փութկոտութիւնն ունեցած են, օրինակի համար Մարշն, որոց միջոցաւ թոյնը կը գտնուի նոյն իսկ հո՛ն ուր չիկայ· Ուստի մարդիկ նախամեծար կը համարին այժմ ապրիլ շուներու եւ կատուներու նման, բայց ապրիլ··· մինչեւ այն օրն յորում մահն ինքնին վրայ կը հասնի եւ թոյլ կուտայ մեզ շիրմի մը վրայ սա յաղթական արձանագրութիւնը փորագրել տալ «Ի յիշատակ զօքանչիս» կամ «Փեսայիս» եւ ի ստորեւ, երկու ձեռքեր, միացած· Կարելի չէ եղած բնաւ գիտնալ թէ աղօթե՞լու նշան մ'է այն թէ ծափահարելու·

—Կը ծաղրէ՛ք զիս, գոչեց Բէյրօլ ծիծաղելով·

—Ե՞ս· Կ'ուզէ՞ք լաւ գործ մը կատարել· Մէկը գտէ՛ք որ յօժարի տիկին Տէվառէնն ազատել իւր փեսին ձեռքէն· Թո՛ղ այս բանս յաջողի, եւ յետոյ եկէ՛ք միլիոն մը խնդրել տիրուհիէն· Պատրաստ եմ հարիւրին քսան-հինգ ֆրանք միասով զեղչելու, եթէ ուզէք·

Եւ մինչ Բէյրօլ մտախոհ կը մնար·

—Սակայն երկար ժամանակ կայ որ տունէն էք դուք, շարունակեց Մաւէշալ, ինչպէ՞ս կ'ըլլայ որ աւելի լաւ չէք ճանչնար տիրուհին· Ահա՛ կ'ըսեմ ձեզ եւ լաւ յիշեցէ՛ք· տիկին Տէվառէնի եւ իշխանին միջեւ մահացու ատելութիւն մը կայ· Երկուքէն մին միւսը պիտի ուտէ· Ո՞րը· Գրաւները բացուած են այժմէն·

—Բայց ես ինչ ընելու եմ· Իշխանն իւր յոյսը վրաս դրած է·

—Գնացէ՛ք ըսէք իրեն որ այլ եւս յոյսը կտրէ·

—Ո՛չ, լաւագոյն կը համարիմ որ ինք գայ իմ գրասենեակս· Հոն աւելի սիրտ կ'առնում· Մնա՛ք բարով, Մաւէշալ·

—Երթա՛ք բարեաւ, պարոն Բէյրօլ· Սակայն ձեր գրաւը որո՞ն կողմն է·

—Ինքզինքս վտանգելէ առաջ կ'ուզէի գիտնալ թէ ո՞ր կողմն է իշխանուհին·

—Ա՛հ, կնահաճո՛յ· կանանց ետեւէն շատ կ'իյնաք· Այդ թերութիւնը օրին մէկը փորձանք մը պիտի բերէ ձեր գլխուն·

Բէյրօլ ժպտեցաւ, եւ յանձնապաստան շարժում մը ընելով, հեռացաւ· Մաւէշալ նստաւ գրասեղանին առջեւ եւ թերթ մը նամակի թուղթ առնլով·

—Պէտք է որ գրեմ Բիէռի թէ ամեն բան լաւ կ'ընթանայ այստեղ, մրմնջեց· Եթէ անցած դարձածը գիտնար, շատ կուգար եւ կարող էր յիմարութիւն մը գործելու·

Եւ սկսաւ գրել·

ԺԸ

Բէյրօլ դրամատունը փառաւոր երեւոյթ մը չունի· Երկու դատիկոնով նեղ շէնք մը կը բռնէ այն, որոյ սպիտակ ճակատը ժամանակէն սեւցած է· Կառանցքի դուռ մը ներս կը մտնեն որոյ կամարին ներքեւ, դէպ ի աջակողմ, կը գտնուի գրասենեկաց մուտքը· Սանդուղ մը, բազմաթիւ այցելուաց ոտից շփումներէն մաշած գորգով մը ծածկուած, դէպ ի առաջին յարկը կը տանի ուր գաւթիկին վրայ կը բացուի նրբանցք մը որ գրասենեակները կը տանի· Ապակեայ դրանց վրայ, զանազան զեկուցումներ կը կարդացուին· «Կտրոններու վճարումն· — Սակարանի յանձնարարութիւնք· — Ընդհանուր հաշուակալութիւն· — Արտաքին թղթակցութիւն·» Դրամարկղը շրջապատուած է վանդակապատով մը որ մէջտեղէն ծակուած է պղնձեայ երկու դարակներով· Բէյրօլի խուցը աջ կողմն է, գրասենեակներուն խորն· Իւր մասնաւոր բնակարանին հետ հաղորդակցութիւն ունի այն· Նրբանցքին երկայնութեամբ շարուած են կաշեպատ բազմոցներ եւ փոքրիկ սեղաններ որոց մօտ կը նստին մանչերն· Ամեն բան, այդ տան մէջ, պարզ է, լուրջ, եւ պարկեշտութիւն կը բուրէ· Բէյրօլ յիմարութիւններ ընելու հետամուտ չէ եղած բնաւ· Սեղանաւորութեան սկսած ժամանակն համեստօրէն հաստատուած է, և հարստութիւնն աւելնալով, յարաբերութիւններն ընդարձակուելով ու դրամական շարժումը մեծնալով հանդերձ, սովորոյթները չէ փոփոխած բնաւ· Դիւրամատչելի է, նոյն իսկ այն յաճախորդաց զորս չի ճանչնար· Այցետոմսերնին ներս կը ղրկեն, եւ իւրաքանչիւրն իւր կարգին կը մտնէ կանաչ թաւիշով կահաւորեալ մեծ գրասենեակն ուր սեղանաւորը կը կարգադրէ իւր անհուն գործեր·

Հո՛ն էր որ, պաշտօնէից, մանչերուն և յաճախորդաց երթեւեկութեանց մէջտեղ, Բանին իշխանն եկաւ յաջորդ օրը Բէյրօլը գտնել· Առաջին անգամ լինելով, Սերժ ինքզինքը կը նեղէր սեղանաւորին համար· Ամենախորին յարգանաց նշաններով ներս հրամցուեցաւ· Տիկին Տէվառէնի հոյակապ անունն անոր ճակատին վրայ պսակ մը կը բոլորէր յաչս վաճառատան մարդոց·

Բէյրօլ, սակաւ ինչ շուարած, այլ հաստատամիտ, անոր ընդ առաջ վազեց· Իշխանը դիւրագրգիռ էր, սակաւ ինչ նեղացած· Դժուարութիւն մը կը նախազգուշակէր·

—Ո՞ւր էք տեսնենք, սիրելիս, ըսաւ առանց նստելու· Երէկուընէ ի վեր ինձ խոստացած գումարնուդ կ'սպասեմ·

Բէյրօլ ականջը քերեց եւ վար նայեցաւ· Այս յստակ յարձակումն յանկարծակիի կը բերէր զինքը·

—Պատճառն այն է որ··· սկսաւ·

Սերժ յոնքերը պռստեց·

—Արդեօք մոռցա՞ք ձեր խոստումն·

—Ո՛չ, պատասխանեց Բէյրօլ երկար շեշտ մը տալով ձայնին, բայց երէկ տիկին Տէվառէնին հանդիպեցայ·

—Այդ հանդիպումն ո՞ր կէտին մէջ կրնայ բարեփոխած լինիլ ձեր որոշումն·

—Բայց ծայրէ ի ծայր, ըսաւ Բէյրօլ աշխուժիւ· Զօքանչնիդ պարզօրէն յարձակում մը ըրաւ վրաս եւ արգիլեց ինձ յառաջիկային մէջ ձեզ դրամ փոխ տալ· Կը հասկնաք, սիրելի իշխանս, որ տիկին Տէվառէնի հանդէպ իմ ունեցած կացութիւնս յոյժ փափուկ է· Իւր դրամագլխէն կարեւոր մաս մը իմ դրամատանս մէջ կը գտնուի ինքն է որ առաջին անգամ զիս հրապարակ հանողը· Չեմ կրնար, առանց ապերախտ եղած լինելու հակառակիլ իւր կամաց· Դուք իմ տեղս ենթադրեցէք ինքզինքնիդ, եւ արդարութեամբ դատեցէ՛ք այն երկայրի կացութիւնն յոր կը գտնուիմ, այն է կամ զձեզ նեղացնել եւ կամ բարերարուհւոյս անհնազանդ գտնուիլ·

—Մի՛ լաք, անօգուտ է, ըսաւ Սերժ արհամարոտ ծիծաղով մը· Կը կարեկցիմ ձեր վշտաց· Հարուստներուն կողմը կը բռնէք· այս ալ տեսակ մը կարծիք է· Կը մնայ գիտնալ թէ ի՞նչ պիտի շահիք ատկից·

—Իշխա՛նս, կ'երդնում ձեզ թէ յուսահատ վիճակի մը մէջ եմ, գոչեց Բէյրօլ, խօսակցութեան առած ձեւէն նեղացած· Մտիկ ըրէ՛ք· արդարադատ եղէք· Չեմ գիտեր թէ ի՞նչ ըրած էք ձեր զօքանչին, բայց սաստիկ կերպով կրակ կտրած է ձեր դէմ· Եթէ ես ձեր տեղը ըլլայի, տիկին Տէվառէնի հետ չէի թշնամանար· Նախամեծար կը սեպէի քանի մը զիջողութիւններ ընել անոր եւ հաշտուիլ· Գիտէք թէ ճանճերը քացախով չեն բռնուիր·

Սերժ նայուածքով մը Բէյրօլը չափեց, յետոյ ծայրայեղ լրբութեամբ մը գլխարկը գլուխը դնելով·

—Ներեցէ՛ք, սիրելիս, ըսաւ· իբր սեղանաւոր՝ սքանչելի մարդ մ'էք երբ ըստակ ունիք, բայց իբր բարոյական քարոզող՝ անհաւանապէս ծաղրելի էք·

Եւ առանց այլ եւս երկարելու, կրունկին վրայ դառնալով, դուրս ելաւ գրասենեակէն, բոլորովին ապշած թողլով սեղանաւորը· Գաւազանը խաղցունելով նրբանցքէն անցաւ· Խուլ զայրոյթ մը, տարտամ մտահոգութեամբ խառն, պատած էր զինքը· Տիկին Տէվառէն մէկ խօսքով ցամքեցուցած էր այն աղբիւրն ուսկից իշխանը կ'առնուր երեք ամսէ ի վեր իւր ծախսած դրամն· Նոյն երեկոյին իսկ մեծագումար պարտք մ'ունէր Ակումբը վճարելի· Եւ փոյթ չէր ըներ Բարիզու վաշխառուներուն դիմել·

Պաղարիւն կատաղութեամբ մը վար իջաւ սանդուղներէն, հարցունելով ինքնին թէ ինչպէ՛ս պիտի ազատէր այս յոռի կացութենէն· Երթալ տիկին Տէվառէնը գտնել եւ անոր առջեւ նուաստանա՞լ, ինչպէս խորհուրդ կուտար Բէյրօլ· Բնա՛ւ·

(Շարունակելի)

—Անցեալ երկուշաբթի Պելկրատի մէջ մեծ բազմութիւն մը, որ ի նպաստ Սահմանադրութեան վերաքննութեան և ի պատիւ Միլան Թագաւորին ցոյց մը կ'ընէր, աւստրեան դեսպանատան առջեւ հասնելով, հակաւստրեան ցոյցեր ըրաւ, և քարեր արձակելով խորտակեց դեսպանատան ապակիները։ Պելկրատի կառավարութիւնն անմիջապէս ներողութիւն խնդրեց Աւստրիոյ կառավարութենէն։ Այս ցոյցով Պելկրատցիք հաստատեցին թէ իրենք փափաքող են թագաւորական իշխանութեան չափաւորման, ինչպէս Միլան Թագաւոր խոստացաւ իւր վերաքննական յայտարարութեամբ, բայց կը մերժեն Թագաւորին արտաքին քաղաքականութիւնն, որ է Աւստրիոյ վրայ յենուլ։ Բայց ժողովուրդն ո՛չ միայն Ռուսիայէն այլ և Աւստրիայէն անկախ կ'ուզէ լինիլ։ Վիքթոր Էմմանուէլի հօր Քարլօ Ալպէրթօ թագաւորին նշանաբանն (Իտալիա ֆարա տա սէ) Սերպերուն ևս նշանաբանն ըլլալ կ'ուզուի։

—Նորթ Տեյչէ Ալկէմայնէ Զայթունկ կը շարունակէ իւր կէս-պաշտօնական գրչի պատերազմն ընդդէմ արաբ գերեվաճառաց տիրապետութեան յԱփրիկէ։ Նոր յօդուածի մը մէջ կ'ըսէ թէ սոցա նպատակն է բովանդակ Սուտանի մէջ վերահաստատել գերեաց տուր և առն, Քոնկոյի պետութեան մէջ՝ ուր գերեվաճառը ջնջած է՝ արեւելեան կայաբաններ հաստատել, և ապստամբութիւններ յառաջ բերել Արեւելեան Ափրիկէի այն մասանց մէջ որք եւրոպեան Տէրութեանց հովանաւորութեան ներքեւ մտան վերջին ժամանակներս։ Այս երբեակ վտանգին դէմ դնել եւրոպեան Տէրութեանց գործն է ի սէր քաղաքակրթութեան և մարդկութեան։

—Հալէպ, 3 Նոյմ.— Գերմանական հիւպատոսարանի զինանշանն այսօր տեղը դրուեցաւ, ի ներկայութեան հիւպատոսին, ոստիկանապետին, գաւառապետին և այլ մի քանի պաշտօնէից։

—Փարիզ, 3 Նոյմ.— Թոնքինի մէջ Ֆրանսացւոց «օտար լեգէոն» կոչուած զօրաբաժնէն 40 անձէ բաղկացեալ յառաջապահ խմբին վրայ ծովահէնք յարձակում ըրին։ Հրամանատար տեղակալն և իւր 39 զօրքեր սպաննուեր են։ Բայց գաղթային նախարարութիւնը կը յայտարարէ թէ տեղակալն և ուրիշ զինուոր մը միայն սպաննուած են։

Քանքանեաքի (Ավէյրոն) ածխահանքերուն մէջ պայթում մը տեղի ունենալով, 40 մարդիկ կորան։ (Հաւաս)

ՄԵՆԱՇՆՈՐՀ

ԱՆՈՅՇ ՋՈՒՐԻ ԲԱՇԽՄԱՆ
Ի ՍԿԻՒՏԱՐ ԵՒ Ի ԳԱՏԸ ԳԻՒՂ

Ինչպէս երէկ տեղական միւս լրագրաց հետ ծանուցինք, Օսմ. կայս. Պանքայի Թարգմանութեանց գրասենեկի պետ և Լրագրոյս Վարչական Խորհրդոյ Ատենապետ Մեծ. Կարապետ էֆ. Սրվաճեանի խնդրած մենաշնորհը՝ Նախարարաց Խորհրդոյ կողմէ ընդունուելէ յետոյ, Վեհ. Սուլթանի բարձր հաստատման արժանանալով, շնորհուած է կայսերական Իրատէիւ։

Այդ մենաշնորհ՝ որուն նպատակն է անոյշ ջուր բաշխել Սկիւտարի, Գատը գիւղի և շրջակայ գիւղերու բնակչաց, պիտի գործադրուի հետեւեալ եղանակաւ։ Կէօք Սուի բարձրերը մեծ Ջրամբար մը պիտի շինուի ուր պիտի հաւաքուին Կէօք Սուի և մերձակայ զանազան առուակներու ջուրերն ինչպէս նաեւ անձրեւի ջուր։ Հաստատուած է թէ այս կերպով ջրամբարի մէջ հաւաքելի ջուրը Թաքսիմի ջուրի տեսակին յար և նման պիտի լինի, և գուցէ քիչ մ'ալ լաւագոյն։ Կեդրոնական մեծ ջրամբարէն ջուրը պիտի բաշխուի, շոգեշարժ մեքենայից և յատուկ խողովակներու միջոցաւ ի Սկիւտար և Վոսփորի ասիական եզերաց միւս գիւղերն, մինչեւ Գանտիլլի, ինչպէս նաև ի Գատը գիւղ և շրջակայ գիւղերն մինչեւ Էրէնգիւղ։

Վերոյիշեալ եղանակաւ բաշխելի ջուրն ո՛չ միայն բաւական պիտի լինի այդ գիւղերու բնակչաց պիտոյից, այլ և եթէ բնակչաց թիւը կրկնապատկի իսկ, դարձեալ ջրոյ պէտք չպիտի ըզգացուի. այնքան առատ է այն։

Աւելորդ է խօսիլ այս ձեռնարկի հանրօգուտ հանգամանաց վրայ, որք ակներեւ են, ըստ որում ասիական եզերաց գիւղերու բնակիչք լիառատ պիտի վայելեն իրենց էական պիտոյից անհրաժեշտ եղող տարրն, այն է անոյշ ջուր, եւ այն՝ թէ՛ առատ կերպով եւ թէ դիւրամատչելի պայմաններով։

Օգոստափառ Սուլթանն որ միշտ քաջալերող կը հանդիսանայ երկրին զարգացման և ժողովրդեան բարօրութեան վերաբերեալ ամեն ձեռնարկի, ներկայ մենաշնորհի համար խնդրուած կայսերական վաւերացումը շնորհել հաճելով, ասիական եզերաց բնակիչները կ'օժտէ առաւելութեամբ մը զոր եւրոպական եզերաց բնակիչք արդէն առիթ ունին գնահատելու Ն. Կ. Վեհափառութեան հպատակասէր հոգածութեան շնորհիւ։

⁂

Այս աւուր Թուրքէ հետեւեալ տողերը կը գրէ այս առթիւ.

«Վեհ. Սուլթանն, որ միշտ հոգածու է իւր հպատակաց անդորրութեան և բարեկեցութեան, տեղեկանալով որ Սկիւտարի մեծ հրդեհի միջոցին մեծապէս զգալի եղած է ջուրի պակասութիւնն, հրամայած է տալ այն մենաշնորհն, զոր Սրվաճեան Կարապետ էֆէնտի խնդրած էր, Սկիւտար և ի Գատըգիւղ ջուր բերելու համար։»

Թուրք Թերթը մեծաւ գոհունակութեամբ ծանուցանելէ յետոյ այս լուրը, կը յարէ. «Աներկբայ ենք թէ Սրվաճեան Կարապետ էֆէնտի, որ տէրութեան հաւատարիմ հպատակ և ուղղամիտ ու բարենախանձ անձ մ'է, ամբողջովին պիտի գործադրէ այդ մենաշնորհի յատուկ պարտականութիւնները։»

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրօնական Ժողովն ի նիստ գումարեցաւ երէկ ի Պատրիարքարան ընդ ատենապետութեամբ Գեր. Խորէն Նար-Պէյ Սրբազանի և ի մէջ այլոց զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով.

Ժողովն որոշեց ննջեցելոց յուղարկաւորութեան ծախուց ցուցակի պատճէնը ղրկել գլխաւոր թաղերու քարոզչաց՝ որպէս զի քահանայից և Թաղական Խորհրդոց հետ իրենց թաղի վիճակին համաձայն հարկ եղած բարեփոխումներն ընեն և մինչեւ մէկ ամիս տեղեկագրեն ի Պատրիարքարան։

Հաստատեց Գեր. Օրմանեան Մաղաքիա եպիսկոպոսի անուանումն յուսուցչութիւն կրօնագիտութեան Կեդրոնական Վարժարանի։

Կորնթոսի Պարանոցին համար քահանայ մը նշանակեց հովուելու համար նոյն պարանոցի պեղման առթիւ անդ աշխատող պանդուխտ ազգայիններն։

Նկատողութեան առնլով Սրուանձտեանց Գեր. Գարեգին եպիսկոպոսի յօրինած Քրիստոնէական դասագիրքն՝ համաձայն գտաւ զայն Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետութեանց և վաւերացուց։

Նկատելով որ Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն նուիրեալ Ս. Թադէոսի և Բարթուղիմէոսի պատկերը սրբագրուած է Ժողովոյ կողմէ տրուած հրահանգին համաձայն, որոշեց արտօնել նորա օծումը։ Նոյնպէս Մայր եկեղեցւոյ գլխադիր նոր պատկերը հնոյն յար և նման գտնելով արտօնեց նորա օծումը։

Ժողովն Աւագերիցութեան աստիճան տուաւ Գուզկունճուքի Սեթեան Արժ. Տ. Կարապետ քահանային։

Գումգաբուի Ուսումնասիրաց ընկերութեան կողմէ պատգամաւորութիւն մը երէկ Ամեն. Ս. Պատրիարք Հօր ներկայացաւ և շնորհաւորական ուղերձ մը մատոյց։ Ն. Ամենապատուութիւն իւր գոհունակութիւնն յայտնելով քաջալերական խօսքեր ուղղեց։

Այս ընկերութիւն, որոյ նախագահն է Մեծ. Տօքթ. Թիրեաքեան էֆէնտի, կազմուած է ազգային և պետական վարժարանաց բարձրագոյն կարգի ուսանողներէ և նպատակն է օգնել կարօտ ուսանողաց։

Կը խնդրուի մեզմէ ծանուցանել թէ արտաքոյ կարգի պատճառաւ մը՝ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն նորոգեալ մասանց օծման հանդէսն որ այս կիւրակէի համար որոշուած էր, յետաձգուած է յաջորդ կիւրակէին, 6/18 Նոյեմբեր։

Սեբաստիոյ Սիներքիմեան ընկերութեան կողմէ պատգամաւորութիւն մը, զոր կը կազմէին նոյն գաւառի պատուաւոր ազգայինք ոմանք, երէկ Պատրիարքարան երթալով Ամեն. Ս. Պատրիարք Հօր ներկայացաւ և շնորհաւորեց Ն. Ամենապատուութեան պաշտօնը։

Պատգամաւորներն էին.

Ահարոն էֆ. Մարգարեան
Յովհաննէս » Զառացեան
Նիկողոս » Խորիկեան
Մինաս » Տէրպապեան

Կ. Պոլսոյ զանազան Կարնեցի պատուաւոր ազգայիններէ Համազասպ էֆ. Պալլարեան և Միհրան էֆ. Խաչիկեան ևս նախընթաց օր Ազգ. Պատրիարքարան երթալով Ս. Պատրիարք Հօր պաշտօնը շնորհաւորեցին յանուն Կարնոյ ազգայնոց։

Գոհունակութեամբ կը կարդանք այս աւուր Թուրք լրագրոյ Պաշտօնական Ցուցակին մէջ թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է Միրիմիրանի աստիճան շնորհել Վսեմ. Տօքթօր Փէշտիմալճեան էֆէնտիին, որ դեռ մի քանի օր առաջ երրորդ կարգի Օսմանիէ պատուանշան ստացած էր։ Կայսերական բարձր գնահատման այս կըրկին հաւաստիք բերկրութեամբ կը լնուն հայազգի տաղանդաւոր բժշկին բազմաթիւ բարեկամներն ու համակրողները։

Նոյնպէս գոհունակութեամբ կը ծանուցանենք թէ երրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհուած է Մեծ. Միհրան էֆէնտի Գազանճեանի, որ հեռագրական վարչութեան մէջ իւր վարած կարեւոր պաշտօնէն զատ, ծանօթ է նաեւ ազգային հանրօգուտ ձեռնարկներու և ընկերութեանց մէջ իւր ունեցած գործօն մասնակցութեամբ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Թաղապետութեան Ե. շրջանակին տնօրէն անուանուեցաւ Ը. շրջանակի տնօրէն Մինաս էֆէնտի և նորա յաջորդեց Ե. շրջանակի տնօրէն Թահսին էֆէնտի։

Իւլայի առաջին աստիճան տրուեցաւ Հեռագրական և Թղթատարական վերատեսչութեան օգնական Ապտիւրրահման էֆէնտիի։

Իւլայի երկրորդ աստիճան՝ նոյն վերատեսչութեան հաշուակալ Նուրէտտին էֆէնտիի, մէքթուպճի Պեքիր էֆէնտիի և երկրագործական տնօրէն Նուրի պէյի։

Միրիմիրանի աստիճան՝ կայս. պալատան բժիշկներէն Տօքթէօռ Տիգրան էֆէնտի Փէշտիմալճեանի։

Սանիյէ Միւթէմայիզ աստիճան՝ Պոլսոյ թղթատարատան առաջին տնօրէն Լէպիպ էֆէնտիի, Վանայ թղթատարատան տնօրէն Թահսին էֆէնտիի, Բերայի հեռագրատան տնօրէն Անթոնիատիս էֆէնտիի, կարասեաց տնօրէն Զիւհտի էֆէնտիի և թարգմանիչ Ֆախրի էֆէնտիի։

Սանիյէի երկրորդ աստիճան՝ Առեւտրական Նախարարութեան կեդրոնական երկրագործական ընկեր Ճէմալ պէյի, հեռագրական վարչութեան վիճակագրութեան տնօրէն Մազհար էֆէնտիի և նոյն վարչութեան դիւանապետ Սալիմ էֆէնտիի։

Սալիսէի աստիճան՝ նոյն վերատեսչութեան պաշտօնեաներէն Թէվֆիք և Ճէմիլ էֆէնտիներու։

Երրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Հեռագրական եւ Թղթատարական վերատեսչութեան հաշուեցոյց գանձման տնօրէն Բէշիր էֆէնտիի, Պոլսոյ թղթատարական տնօրէն Հալիմ էֆէնտիի, Բ. Դրան հեռագրատան տնօրէն Ֆախրի էֆէնտիի, Հեռագրատան պաշտօնեաներէն Գատրի էֆէնտիի, առաջին քարտուղար Շէվքէթ էֆէնտիի, թարգմանութեանց սենեկի առաջին քարտուղար Րիզա էֆէնտիի, արտաքին հաշուակալութեանց տնօրէն Ապտուլլահ էֆէնտիի և Բերայի հեռագրատան տնօրէնի օգնական Գազանճեան Միհրան էֆէնտիի։

ԵԼՄՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Վեհ. Սուլթանն նկատելով որ ասկից առաջ և վերջին անգամ Իրեն ներկայացեալ երկու ելմտացոյցի բացերուն քանակութիւնը իրարմէ կը տարբերի և թէ ելմտական գործառնութեանց բարենորոգման համար առաջարկեալ միջոցներն ևս իրարու չեն համապատասխաներ, հրամայած է յանձնաժողով մը կազմել որպէս զի անգամ մ'եւս քննուին ելմտական խնդիրք և ըստ քաղաքային տնտեսագիտութեան ձեռք առնուելիք միջոցներն համապատասխանեն երկրին ընդհանուր կացութեան։

Սոյն յանձնաժողովը, զոր կը կազմեն Վսեմ. Ցակոբ, Մահմուտ ու Զիւհտի փաշաներն և մաքսային վերատեսուչ Էտիպ էֆէնտի, Ելմտական նախկին Նախարար Միերիֆ Թէվֆիք փաշա, Ելմտական Նախարարութեան խորհրդական Աքիֆ էֆէնտի, Ապրօ էֆէնտի և Փորթուգալ Միքայէլ էֆէնտի, բռնած է քննել այդ երկու ելմտացոյցերն և նոցա յարակից թուղթերը։ Նոյնպէս այն գրութիւններն որք կը պարունակեն հասոյթից ճշգրիտ քանակութեան առթիւ այլ և այլ պաշտօնատանց հետ կատարուած բանակցութիւններն։ Կը յուսացուի թէ յանձնաժողովն ի մօտոյ աւարտէ իւր աշխատութիւններ։

Հասոյթից և ծախուց քննութեան առթիւ կազմեալ յանձնաժողովն, որ ընդ նախագահութեամբ Հասան Ֆէհմի փաշայի, կը շարունակէ իւր աշխատութիւններն։ Սորա ինչպէս նաեւ ասկից առաջ կազմեալ ուրիշ մարմնոյ մը տեղեկագիրք պիտի քննուին վերոյիշեալ յանձնաժողովոյն մէջ։

Նոյնպէս կ'ըսուի թէ նոր բարեփոխութիւնք պիտի կատարուին այն որոշմանց վրայ որք նախապէս տրուած են ի մասին հասոյթից գանձման եւ պարտականութեանց ելմտական պաշտօնէից։

—Ելմտական Նախարարութիւնը տեղեկանալով որ տասանորդի վարձակալաց պաշտօնեայք տասանորդի արտօնագիր կը պահանջեն ութ-տասը օխա խաղողներէն զորս Նիկոմիդիայի կառախումբով Հայտար Փաշա եկող ուղեւորք իրենց հետ կը բերեն իբրեւ նուէր բարեկամաց տրուելու համար, հրահանգ ղրկեց ամեն կողմ արգելուլ այդ տեսակ ապօրէն պահանջումներն։

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԿԱՅՍՐԸ

Պերլինէ ուղղեալ հեռագիր մը, կ'ըսէ Սթանտըրտ, հաւանական կը գտնէ թէ Գերմանիոյ կայսրը յառաջիկայ գարնան Կ. Պոլիս պիտի գայ Վեհ. Սուլթանին այցելութիւն տալու համար։

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Վեհ. Սուլթանն իմանալով Ռուսիոյ Ցարին պատահած արկածն ի Պորքի, հրամայեց տեղեկութիւն ուղել թէ Ցարն ու Ցարուհին ողջամբ ժամանած են ի Պետրպուրկ, ուստից եկած հաստատական պատասխանին վրայ հրամայեց շնորհաւորութեան գիր մ'ուղղել Կայսեր եւ Կայսրուհւոյն։ Վեհ. Սուլթանը նոյնպէս հրամայեց հեռագրաւ հրահանգ տալ Պետրպուրկի օսմանեան դեսպան Շաքիր փաշայի որպէս զի իւր գոհունակութիւնը բերանացի հաղորդէ Նոցին Վեհափառութեանց։

ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախարարաց Խորհուրդն իւր երեկի նստին մէջ նկատողութեան առաւ օտար նաւակատանց խնդրոյն առթիւ կազմեալ յանձնաժողովոյ տեղեկագիրն և յետ խորհրդակցութեան որոշեց այս առթիւ նոր զեկոյցներ ընել աւստրիական դեսպանատան։ Սոյն խորհրդակցութեանց ներկայ գտնուեցաւ նաեւ Արտաքին գործոց Նախարարութեան խորհրդական Վսեմ. Ցարութիւն փաշա, որ նոյն յանձնաժողովոյ նախագահած էր։

Նախարարաց խորհուրդն խորհրդակցեցաւ նաեւ առեւտրական դաշնագրոյ խնդրոյն և զբաղեցաւ ելմտական և այլ կարեւոր խնդիրներով։

ՄԻՒՆԻՐ ՊԷՅ

Կ'ըսուի թէ Արտաքին գործոց նախարարութեան մէքթուպճի Միւնիր պէյ օդափոխութեան համար Փարիզ պիտի երթայ արձակուրդով։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐՔ

Առեւտրական դաշնագրոց նորոգման խնդրոյն առթիւ կարգեալ Յանձնաժողովն երէկ ի նիստ գումարեցաւ Խարիճիյէի պաշտօնատան մէջ և մինչև իրիկուն խորհրդակցութիւններ կատարեց։ Սոյն յանձնաժողովը կը կազմեն Անտառաց և Հանքաց տնօրէն Գուլուսեան Պետրոս էֆէնտի, մաքսային վերատեսչութեան խորհրդական Պէրթրամ էֆէնտի, Բ. Դրան իրաւագէտ խորհրդական Գաբրիէլ ու Կէչէր էֆէնտիք և Առեւտրական Սենեկին նախագահ Ազարեան Արիստակէս էֆէնտի։

ԲԱԹԱՆԹԻ ՏՈՒՐՔ

Բաթանթի խնդրոյն առթիւ տակաւին համաձայնութիւն մը գոյացած չէ Բ. Դրան և անգլիական դեսպանատան միջեւ։ Այս վերջինը Բաթանթի տրոց օրինագրոյն վրայ ինչ ինչ բարեփոխումներ առաջարկած և այս առթիւ Բ. Դրան կողմէ ստացած պատասխանն հաղորդած է Լոնտոնի գահլճին, որով բանակցութեանց շարունակութիւնն յետաձգուած է մինչև որ Լոնտոնէ պատասխան գայ։ Թուրք լրագիրք կ'իմանան թէ Բաթանթի վարչութիւնը պիտի սկսի գործել յառաջիկայ մարտէն։

ԿԵՂԾ ՍԷՐԿԻՆԵՐ

Դամասկոսի մուհասէպճին Հալէպի հրապարակին վրայ 25,000 օսմ. ոսկույ արժողութեամբ՝ կեղծ սէրկիներ գտեր է։

ԱՐԳԻԼԵԱԼ ԼՐԱԳԻՐՔ

Ց'Օտեսա հրատարակեալ Օտէսքի Լիսթոք լրագրոյ ի Թուրքիա մուտքն արգիլուեցաւ։

Օսմանեան արտասովոր դեսպան Ճէվատ փաշա, որ Աթէնք ղրկուած էր ներկայ գտնուելու Եորկիոս Թագաւորին յոբելեանի հանդէսին, այսօր Աթէնքէն ճամբայ պիտի ելնէ մայրաքաղաքս գալու համար։

—Զմիւռնիոյ սպանիական ընդհանուր հիւպատոս անուանուած է Փարիզի փոխհիւպատոս Պ. Ֆրանչեսկօ Գարրի, փոխանակ Պ. Անթոնիօ Տիագ Միրանտայի որ Երուսաղեմայ ընդհանուր հիւպատոս անուանուած է, Բ. Դուռը վաւերացուցած է սոցա պաշտօնները։

—Երէկ մայրաքաղաքս ժամանեցին Սամսոնի պահեստի զօրաց Միրլիվա Ահմէտ Նիւզհէթ փաշա, Ե. զօրաբանակի Միրլիվաներէն Իպրահիմ փաշա, Սուրէյէ Հիւմայունի տնօրէն գնդապետ Հաճի Օսման պէյ և Ճիտտէի պարսկական հիւպատոս Հասան խան՝ Պէյրութէն, Եէմէնի Թաազ գաւառին նախորդ կառավարիչ Իպրահիմ Քեամիլ փաշա, Պէյրութի ռուսական հիւպատոսն և Աղեքսանդրիոյ գերմանական հիւպատոսարանի առաջին քարտուղարն՝ Աղեքսանդրիայէն։

ԽԼՈՒԹԻՒՆ

Նա բժշկեց գլխու մէջ. Միջոց իւր տան մէջ բուժելու զայնս, առանց ընդհատելու իւր պարապմունքն. 30 սանդիմ ղրկելով կ'ստացուի 132 երեսով պատկերազարդ տետրակ մը։ Դիմել առ.

M. Nicholson, 4, rue Drouot, Paris

ԱՍԻԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԸՆԴ ՄԷՋ ԿԱՅՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ Պ. ՔԱՈՒԼԱՅԻ

(Տես՝ Երէկի Թիւէն Եւ Վերջ)

Յօդ. ԻԶ. — Արտօնատէրը պիտի կարենայ երկաթուղւոյ ամբողջ գծին երկայնութեամբ հեռագրական թել մը հաստատել. այդ գիծը չ'պիտի կարենայ գործածուիլ մասնաւոր հեռագրոց համար որք վերաբերութիւն չ'ունենան երկաթուղւոյ շահագործման հետ։

Կառավարութիւնը պիտի կարենայ արտօնատիրոջ հեռագրական գերանները գործածել հեռագրական գծի մը հաստատման համար. Եթէ այդ գերանները չ'բաւեն այս պիտոյից, կառավարութիւնն իրաւունք պիտի ունենայ իւր ծախուք ուրիշ գերաններ հաստատել գծին վրայ և կամ, գծերը խզուած կամ աւրուած ժամանակը, կայարանաց մէջ հեռագրական պաշտօնեայներ կարգել, Ընկերութեան գծերուն միջոցաւ պաշտօնական կարեւոր հեռագրեր փոխանակելու համար, պայմանաւ սակայն որ այս բան երկաթուղւոյն գործոց արգելք չ'լինի։

Յօդ. ԻԷ. — Արտօնատէրն իրաւունք պիտի ունենայ՝ իւր փոխադրութեան միջոցներով և առանց ո՛ր եւ է տուրք վճարելու կայսրութեան հեռագրական վարչութեան, փոխադրել միմիայն երկաթուղւոյ գործոց վերաբերեալ թղթակցութիւններն ու պայուսակները։ Նմանապէս իրաւունք պիտի ունենայ, առանց ո՛րեւէ տրոց վճարման, փոխադրելու շինութեանց յատուկ նիւթեր, որպէս են հանքածուխ, ճարպ, ածուխ, ինչպէս նաեւ երկաթուղւոյ պահպանման ու շահագործման համար պէտք եղած նիւթերն ու առարկայները։

Յօդ. ԻԸ. — Արտօնատէրն ինչպէս նաեւ իւր կազմելիք անանուն Ընկերութիւնը օսմանեան լինելու պարտաւոր լինելով, ինչ բողոք և վէճ որ ծագին, թէ՛ ընդմէջ կայս. կառավարութեան ու արտօնատիրոջ կամ Ընկերութեան, և թէ՛ ընդմէջ արտօնատիրոջ կամ Ընկերութեան և մասնաւորաց, ներկայ Պայմանագրոյ կամ անոր կից Յանձնառութեանց Տետրին գործադրման կամ մեկնութեան առթիւ, օսմանեան ձեռնհաս դատարանաց պիտի յանձնուին։

Յօդ. ԻԹ. — Կայս. կառավարութիւնն արտօնատիրոջ կ'երաշխաւորէ տարեկան 15,000 Ֆրանքի խառն հասոյթ մը, շինուած և շահագործուած մէն մի քիլոմեդրի համար։

Նիկոմիդիոյ, Էրթօղրուլի, Քէօթահիոյ և Էնկիւրիի գաւառակաց, որոց մէջէն պիտի անցնի երկաթուղին, տասանորդի տուրքերն աճուրդի հանուած ժամանակ, որուն ներկայ պիտի գտնուի Հանրային Պարտուց վարչութեան կողմէ կարգեալ պատուիրակ մը, վարձակալաց կողմէ յանձնելի պարտատոմսք՝ աճուրդի դրուած տասանորդի տրոց արժէքին փոխարէն, վերոյիշեալ գաւառակաց Հանրային Պարտուց Սնտուկներու հրամանին վճարելի պիտի լինին, և այդ արժէքին փոխարէնն ուղղակի յիշեալ սնտուկներուն պիտի յանձնուի։ Այն գումարները զորս կայս. կառավարութիւնը յանձն կ'առնու տարուէ տարի արտօնատիրոջ վճարել, վերոյիշեալ քիլոմեդրական հասոյթն ամբողջացնելու համար, սոյն արժէքէն պիտի առնուի և Հանրային Պարտուց վարչութեան կողմէ արտօնատիրոջ վճարուելով, մնացեալն անոր միջոցաւ կայս. Գանձուն պիտի յանձնուի։

Յօդ. Լ. — Նիկոմիդիայէն յԷսկի Շէհիր և Էսկի Շէհիրէն յԷնկիւրի երկու գծերու շինութեան համար սահմանեալ ժամանակամիջոցին մէջ, որ նշանակուած է 4րդ յօդուածով, կառավարութիւնն յանձն կ'առնու ամեն տարի արտօնատիրոջ վճարել, 100ին 4էն, տոկոսն այն գումարներու որոց ծախսուած լինելը հաստատուի կառավարական յանձնաժողովոյն քննութեամբք, պայմանաւ սակայն որ այդ տոկոսը չ'առնուի մէն մի քիլոմեդրի համար միջին հաշուով 150,000 Ֆրանքէն վեր եղող գումարէ մը։

Այս տոկոսի տարեկան վճարումը դիւրացնելու համար, կայս. կառավարութիւնը կը հաւանի որ վերեւ յիշեալ չորս գաւառակաց տասանորդի հասոյթք Հանրային Պարտուց վարչութեան սնտուկներուն վճարուին՝ շինութեանց սկզբնաւորութենէն անմիջապէս յետոյ տասանորդի առաջին տրոց գանձումէն սկսեալ, և այս՝ 25րդ յօդուածով նշանակեալ եղանակաւ, որպէս զի այդ վարչութիւնը բաժնէ զայնս արտօնատիրոջ և կայս. գանձուն միջեւ։

Յօդ. ԼԱ. — Կայս. կառավարութիւնը յանձն կ'առնու արտօնատիրոջ յանձնել Հայտար Փաշա—Նիկոմիդիոյ գիծն իւր անշարժ և շարժուն նիւթեղէններով (շէնքեր և կառքեր) ու յարակից մասերով, այն վիճակին մէջ յոր կը գտնուին այժմ, ինչպէս նաև յայնկոյս Նիկոմիդիոյ գտնըւած կիսաւարտ շինուածներն ու այն հողերն որոց վրայ սկսուած են անոնք։

Յիշեալ գծին և յիշեալ շինուածոց ամեն պարտականութենէ և ամեն արգելքէ զերծ վիճակի մէջ յանձնումէն մէկ ամիս վերջ, արտօնատէրը 6,000,000 Ֆրանք պիտի վճարէ կայս. կառավարութեան։

Հայտար Փաշա — Նիկոմիդիոյ գծին յանձնման օրէն սկսեալ, անոր կից շահագործեալ զանազան գծերու հասոյթք ի մի պիտի հաւաքուին, որոշելու համար ամբողջ գծին քիլոմեդրական խառն հասութից միջին գումարն։

Քիլոմեդրական խառն հասոյթն այսպէս գիտցուելով, եթէ հիմ պիտի ծառայէ հաշուելու համար այն գումարը զոր Հանրային Պարտուց վարչութիւնը պիտի վճարէ ի հաշիւ օսմ. կառավարութեան տասանորդի տրոց հասոյթներէն, ամբողջացնելու համար 15,000 Ֆրանքի քիլոմեդրական հասոյթն, ըստ 25րդ յօդուածոյ։

Նոյն օրէն սկսեալ, Հայտար Փաշա—Նիկոմիդիոյ գծին յանձնումէն՝ այս գիծը պիտի վայելէ Նիկոմիդիա—Էնկիւրի գծին բոլոր երաշխաւորեալ առաւելութիւնները. սակայն կառավարութեան երաշխաւորութիւնը պիտի տրուի այն պարագային համար միայն որ Հայտար Փաշա—Նիկոմիդիոյ գծին մէն մի շահագործեալ քիլոմեդրի հասոյթից գումարը 10,300 Ֆրանքի ամբողջացուի։

Այն պարագային յորում ամբողջ գծին խառն հասոյթք միջին հաշուով մէն մի քիլոմեդրի համար 10,300 Ֆրանքն անցնի, որ երաշխաւորեալ է Հայտար Փաշա—Նիկոմիդիոյ գծին համար, այս վերջինս պատկանող յաւելեալ մասն, մինչև 15,000 Ֆրանք, պիտի համարի Նիկոմիդիա—Էնկիւրիի գծին համար կայս. կառավարութեան երաշխաւորած գումարէն։

Այն պարագային յորում կայս. կառավարութիւնը Նիկոմիդիա—Էնկիւրիի գծին արտօնատիրոջ յանձնէ Էնկիւրիէն անդին երկարելի երկաթուղւոյ գծին երկարումը, յայտնի է թէ յիշեալ գծին հասոյթք (ինչպէս նաև Հայտար Փաշա—Էնկիւրիի գծին հասոյթք) պիտի միացուին երկարելի գծին հասոյթից հետ, որպէս զի կարելի լինի որոշել և թեթեւցնել կայս. կառավարութեան կողմէ անոնց յատկացեալ երաշխաւորութեան գումարը։

Հաւասար պայմաններով, արտօնատէրք նախապատուութեան իրաւունք պիտի ունենան երկաթուղւոյ ճիւղեր կարելի գծեր շինելու և շահագործելու համար։

Եթէ արտօնատէրը հարկ տեսնէ Հայտար-Փաշայի գծէն մինչեւ Սկիւտար երկարելու, որ յայնժամ գծին գլուխ պիտի լինի, իրաւունք պիտի ունենայ զայն կատարելու, կայս. կառավարութեան հետ կանխաւ համաձայնելէ յետոյ։

Յօդ. ԼԲ. — Արտօնատէրք իրաւունք պիտի ունենան երկու ճիւղ գծեր շինելու, որ գլխաւոր գծէն պիտի սկսին մին Քէօթահիա և միւսը Պրուսա, առանց կայս. կառավարութեան կողմէ ո՛ր և է երաշխաւորութեան, պարտաւոր լինելով այդ գծերուն յատուկ ծրագիրները ներկայացնել որպէս զի նոյնութեամբ ընդունուին կամ բարեփոխուին, եթէ ներկայ պայմանագրոյ և Յանձնառութեանց Տետրի վաւերացումէն սկսեալ 4 տարուան պայմանաժամու մը մէջ արտօնատէրը սկսի այդ ճիւղերու շինութեան, պարտաւոր պիտի լինի մէկ տարուան մէջ բոլորել Քէօթահիոյ ճիւղն և երկու տարուան մէջ Պրուսայի ճիւղը։

Եթէ այս 4 տարուայ պայմանաժամուն մէջ պատահի որ արտօնատէրը յիշեալ ճիւղերու շինութեան ձեռնարկէ [illegible] շինութեան համար, ներկայիս արտօնատէրք նախապատուութեան իրաւունք պիտի ունենան, հաւասար պայմաններով։

Յօդ. ԼԳ. — Հայտար Փաշա—Էնկիւրիի գծին խառն հասոյթները մէն մի քիլոմեդրի համար 15,000 Ֆրանքն անցնելու պարագային, արտօնատէրք յանձն կ'առնուն կայս. կառավարութեան վճարել այդ 15,000 Ֆրանքէն յաւելեալին 100էն 25ին հաւասար գումար մը։

Ներկայ Պայմանագիրս կնքուած է կայսերական Վեհ. Սուլթանի Իրատէին և կըրկին օրինակաց ստորագրեալ ու փոխանակեալ է։

Ստոր. (Ա. ՔԱՈՒԼԱ) Ստոր. ԶԻՀՏԻ
Կ. Պոլիս, 22 Սեպտ. 1304
4 Հոկտ. 1888

ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՆԵԱՆ

ՀԱՌԱՋԱՏԱԳ ԸՆՏԻՐ ԳՐՈՒԱԾՈՑ
Ազգային եւ օտար մատենագրաց
Աշխատասիրեց
ՄԱՍՆ Ա.

[illegible]

2205 1—3

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Վաւերացեալ
Ազգ. Կեդրոնական Վարչութեան Ուսումնական Խորհրդէն

Յօրինեաց
Ն. ԳԱՐԴԱՇԵԱՆ

[illegible]

Գինն 7 1/2 ղրշ.

[illegible]

1888 17—20

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

Բարիզ, 6 Նոյեմբեր

Պորդուկալ. — Միւնիխի ֆրանսական դեսպան Պ. Մարիանի Հռոմի դեսպան անուանեցաւ։

Լոնտոն, 6 Նոյեմբեր

Լորտերու Ժողով. — Լորտ Սալզպրի կը յայտարարէ թէ վերջերս Ափրիկէի արեւելեան եզերաց վրայ պատահած դէպքերուն պատճառաւ, Գերմանիա որոշեր է աւելի ազդու տնօրինութիւններ ձեռք առնուլ արգիլելու համար գերիներու առուտուրը և զինուց ներածումն յԱփրիկէ։

Անգլիական կառավարութիւնն, ըստ նախարարապետին, հաւանեցաւ ընկերակցելու այս տնօրինութեանց որք ջայարգապէս նաւային պիտի ըլլան եւ Ֆրանսա եւս իւր կողմէ մարտանաւ մը պիտի զրկէ գործակցելու համար այս մասին Անգլիոյ և Գերմանիոյ։

Նիւ-Եորք, 7 Նոյեմբեր

